

ՀՀ Կրթության և գիտության նախարարություն
«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ»
ՊՈԱԿ

«Հաստատում եմ»

ՎՊՄԻ ռեկտոր, բգդ

_____ Խաչատրյան Գ.Կ.

“_25_” 03__ 2011թ.

ԿԱՐԳ

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ «ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ» ԽՈՐԱԳՐՈՎ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ԱՄՓՈՓՄԱՆ

Քննարկվել և ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում
(արձանագրություն թիվ 3 “_25_” __03__ 2011թ.)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Դպրոցականների «Չայրենի աշխարհ» խորագրով լուսանկարչական աշխատանքների մրցույթի կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման կարգը կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է Լոռու մարզի համայնքների դպրոցների VII-XII դասարանների աշակերտների շրջանում «Չայրենի աշխարհ» խորագրով լուսանկարչական աշխատանքների մրցույթի կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման ընթացակարգը:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Մրցույթի անցկացման հիմնական նպատակներն են.

- օժտված դպրոցականների բացահայտումը,
- դպրոցականների ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը նպաստելը,
- ստեղծագործական գործունեության նկատմամբ հետաքրքրության բացահայտումը և զարգացումը,
- լուսանկարչական արվեստի միջոցով դպրոցականների հայրենասիրական, մշակութային դաստիարակությանը նպաստելը:

2.2. Մրցույթի անցկացման հիմնական խնդիրներն են.

- հնարավորություն ընձեռել դպրոցականներին իրականացնելու իրենց ստեղծագործական կարողությունները,
- լուսանկարչական արվեստի միջոցով գեղեցիկի նկատմամբ հետաքրքրության խթանումը,
- հոգևոր, բարոյական, հայրենասիրական զգացմունքների, գեղագիտական ճաշակի զարգացումը,
- տաղանդավոր երեխաների բացահայտումը, նրանց հետագա զարգացմանը նպաստելը:

III. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1. Մրցույթին կամավորության սկզբունքով կարող են մասնակցել Լոռու մարզի համայնքների պետական և ոչ պետական հանրակրթական դպրոցների ու վարժարանների VII –XII դասարանների աշակերտները:

3.2. Մրցույթի կազմակերպման նպատակով Ինստիտուտի ռեկտորի հրամանով ստեղծվում է կազմկոմիտե:

3.3. Մրցույթը կազմակերպում է Ինստիտուտի կրթական բարեփոխումների և կապերի բաժնի բուհ-դպրոց կապերի ենթաբաժինը:

3.4. Մրցույթի մեթոդական ապահովման, աշխատանքների քննարկման, հաղթողներին և մրցանակակիրներին որոշելու նպատակով Ինստիտուտի ռեկտորի հրամանով

ստեղծվում է 5 հոգուց բաղկացած մրցութային հանձնաժողով, որի գործունեությունը իրականացվում է համաձայն սույն կանոնակարգի:

3.6. Մրցութի անցկացման ժամկետից առնվազն 1 ամիս առաջ կազմկոմիտեն տեղեկացնում է մարզի դպրոցներին այդ մրցութի մասին՝ նշելով աշխատանքների ներկայացման ստույգ ժամկետը և անհրաժեշտ պայմանները: Անցկացվող միջոցառման մասին տեղեկատվություն է տեղադրվում նաև Ինստիտուտի կայքում:

3.7. Հայտարարված ժամկետից հետո ներկայացված աշխատանքները չեն ընդունվում:

IV. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ներկայացնելու ոչ ավելի, քան 3 (երեք) լուսանկար:

ա) խոշոր պլան,

բ) միջին պլան,

գ) ընդհանուր պլան:

4.2. Լուսանկարները կարող են լինել սև-սպիտակ, կամ գունավոր:

4.3. Լուսանկարների չափսերն են՝ 20x 30 սմ:

4.4. Լուսանկարները ներկայացվում են փակ ծրարներով: Ծրարի վրա նշվում է աշխատանքի անվանումը, աշակերտի անունը, ազգանունը, դպրոցի գտնվելու վայրը, դասարանը (օր.՝ ք. Սպիտակ, թիվ 2 դպրոց), աշակերտի հեռախոսահամարը:

4.5. Այդ նույն տվյալները մատիտով նշվում են նաև լուսանկարների հակառակ երեսին:

4.6. Լուսանկարները ներկայացվում են Ինստիտուտի կրթական բարեփոխումների բաժին (Վանաձոր քաղաքի և հարակից շրջանների դպրոցականների համար), իսկ մարզի այլ շրջաններում՝ հենակետային դպրոցներ, Ինստիտուտի մեթոդիստներին:

4.7. Մրցութին մասնակցելու համար ընդունվում են նաև խմբակային աշխատանքներ՝ ոչ ավելի, քան 3 (երեք) աշակերտների կողմից: Այս դեպքում ներկայացվող ծրարների վրա և լուսանկարների հակառակ երեսին նշվում են խմբի բոլոր մասնակիցների տվյալները՝ համաձայն 4.4. կետի:

4.8. Մրցութին ներկայացված աշխատանքների քննարկումը և արդյունքների ամփոփումը կատարվում է աշխատանքների ներկայացման ժամկետը լրանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում:

V. Աշխատանքների գնահատման չափանիշները

5.1. Աշխատանքները գնահատվում են համաձայն մրցութին ներկայացված լուսանկարների ժանրային առանձնահատկությունների /նատյուրմորտ, պեյզաժ՝ բնապատկեր, դիմանկար, ֆոտոլրագրություն/:

Աշխատանքների գնահատման հիմնական չափանիշներն են.

- լուսանկարների սյուժեների յուրօրինակությունը,

- լուսանկարների համապատասխանումը մրցույթի թեմային,
- լուսանկարի գեղարվեստական և տեխնիկական որակները,
- ստեղծագործական մոտեցման առկայությունը:

5.2. Լուսանկարները գնահատվում են հանձնաժողովի կողմից 20-բալանոց համակարգով՝ ըստ անվանակարգերի:

5.3. Տվյալ հեղինակի (հեղինակների խմբի) աշխատանքների ընդհանուր գնահատականը ձևավորվում է որպես առանձին լուսանկարների գնահատականների միջին թվաբանական:

6. Մրցույթի արդյունքների ամփոփումը

6.4. Մրցույթի հաղթողներ են համարվում այն դպրոցականները, որոնց ներկայացված լուսանկարները գնահատվել են.

18-20 միավոր՝ I տեղ,

13-17 միավոր՝ II տեղ,

8-12 միավոր՝ III տեղ:

6.5. Մրցութային հանձնաժողովի որոշմամբ առանձին մասնակիցներ կարող են արժանանալ հատուկ մրցանակի:

6.6. Մրցույթի անցկացումից և հաղթողներին որոշելուց հետո լավագույն աշխատանքները կցուցադրվեն Ինստիտուտի՝ ցուցահանդեսների համար նախատեսված վայրում: